



ՀՀ, Երևան 0010, Կառավարական 3-րդ մասնաշենք,
Հայաստան Հիմնադրամ
Հասարակայնության հետ կապերի բաժին
Հեռ: + (374 10) 521505
pr@himmadram.org
www.himmadram.org

Մամլո հաղորդագրություն

Կրթական ոլորտ. «Հայաստան» հիմնադրամն ավարտվել է դպրոցների կահավորման մի շարք ծրագրեր

Երևան, 10 ապրիլի, 2008–«Հայաստան» համահայկական հիմնադրամը մարտ ամսվա ընթացքում ավարտին է հասցրել մի շարք կահավորման ծրագրեր, այդ թվում՝ Փարաքարի արվեստի դպրոցում, Աբովյանի (Կոտայքի մարզ) թիվ 10 դպրոցում, Արթիկի (Շիրակի մարզ) թիվ 3, 4, 5, 6 եւ 7 դպրոցներում, Խնձորեսկի (Սյունիքի մարզ) միջնակարգ դպրոցում եւ Երեւանի թիվ 78 դպրոցում: Բոլոր այս ծրագրերը նախաձեռնել եւ ֆինանսավորել է Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմինը:

7000 բնակչություն ունեցող Փարաքար գյուղի արվեստի դպրոցը, որը կրում է Հովհաննիս Էդգարյանի անունը, 2007 թվականին վերանորոգվեց Հիմնադրամի Ֆրանսիայի տեղական մարմնի ֆինանսավորմամբ: 13,758,549 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ կահավորման ծրագրով դպրոցին տրամադրվել են աթոռներ, սեղաններ, բազմոցներ, կախիչներ, հայելիներ, պահարաններ, գրասեղաններ, երկու կարպետագործության դազգահ, խեցեգործական վառարան, խեցեգործության հաստոց եւ մեկ համակարգիչ: Դպրոցի կահավորումը ֆինանսավորել են տեր եւ տիկին Չոփուրյանները՝ ի հիշատակ Լուսինթագ եւ Սահակ Չոփուրյանների:

Սուտ 200 աշակերտ է հաճախում արվեստի դպրոց Փարաքարից եւ մերձակա գյուղերից՝ Թաիրովից, Մերձավանից, Այգեկից, Բաղրամյանից, Նորակերտից, Պտղունքից, Արեւաշատից ու Մուսալեռից: Դաշնամուրի, փողային նվագախմբի, պարի, նկարչության, գորելենի, խեղեգործության ու գորգագործության դասարանների համար նախատեսված են առանձին դասասենյակներ: Դպրոցն արդեն ընդունում է խեցեգործության ու գորգագործության դասարաններում սովորել ցանկացող աշակերտներին, որոնք իրենց դասերը կանցկացնեն նոր ու հարմարավետ սենյակներում:

Սկարչության ուսուցիչ Լիպարիտ Շահինյանն ասաց, որ այժմ 26 աշակերտ է հաճախում նկարչության խմբակ, իսկ նախկինում նրանց թիվն ընդամենը 12 էր: Չէ՞ որ այժմ դասասենյակն ապահովված է 12 նկարակալով ու նոր սեղաններով եւ աթոռներով:

«Երեխաները միշտ էլ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել նկարչության ու խեցեգործության հանդեպ, սակայն մենք բավարար միջոցներ չունեինք բոլորին ընդունելու: Մենք անչափ շնորհակալ ենք «Հայաստան» հիմնադրամին ու

բարերարներին աջակցության համար: Դպրոցում ոգեւորություն է տիրում: Նկարչական գործիքները միայն աշակերտներին չէ, որ ուրախություն են պարգեւում, դրանք նաեւ մեզ են ոգեւորում ավելի լավ աշխատելու»,- ասաց նա: Ահանիտն ու Անուշն արդէն 2.5 տարի է, հաճախում են նկարչության դասերին: Նրանք միշտ էլ հաճույքով են սովորել այդ դասարանում, բայց այժմ, երբ դասասենյակում նոր կահույք է տեղադրված, դասերն ավելի հաճելի են անցնում: 13-ամյա Անահիտն արդէն որոշել է, որ հագուստի ձեւավորող է դառնալու:

Փողային նվազախմբի դասարանը երկու տարի առաջ է բացվել: Այսօր դասարանում 10 աշակերտ է սովորում: Դասասենյակի պատին խորհրդային շրջանի երաժշտական գործիքների մի գեղեցիկ հավաքածու է ներկայացված. շեփոր, կլարնետ, տրոմբոն, բարիտոն, ջութակ: Գործիքները տեղափոխվել են Փարաքարի միջնակարգ դպրոցից, որտեղ դրանք անգործության էին մատնված: Գյուղապետարանի ջանքերով եւ միջոցներով վերանորոգվելուց հետո՝ դրանք հանձնվել են արվեստի դպրոցին:

Արվեստի դպրոցի տնօրեն Ալմաստ Սվաճյանը մեծ ոգեւորությամբ էր ցույց տալիս դպրոցը, որը վերանորոգվելուց հետո կահավորման խիստ կարիք ուներ: Դպրոցի միջոցներով ձեռք բերված վարագույրը շատ համահունչ է համերգային դահլիճի գեղեցիկ աթոռների հետ: Պատերին կախված նկարները, փոքրիկ գորգերն ու դեկորացիայի այլ էլեմենտները խոսում են հոգատար տնօրենի եւ ողջ աշխատակազմի նվիրումի ու ջանքերի մասին. դպրոցի պատշաճ շահագործումն ու պահպանումը նկատելի է դպրոցի յուրաքանչյուր անկյունում, թեւ այն հիմնանորոգվել է ընդամենը յոթ ամիս առաջ:

«Մեզ անչափ դուր է գալիս նոր ինտերիերը, դպրոցն աննկարագրելիորեն փոխվել է: Մենք գիտակցում ենք, որ Հայաստանում շատ քիչ են արվեստի դպրոցները, որոնք նման պայմաններով են ապահովված: Երախտապարտ ենք «Հայաստան» հիմնադրամին ու Ֆրանսիայի մեր բարեկամներին, որ նման նվեր են մեզ մատուցել», - ասաց տիկին Սվաճյանը: Նա նաեւ նշեց, որ շնորհիվ Հիմնադրամի ծրագրի՝ դպրոցում չորս աշխատատեղ է բացվել՝ մեկը ադմինիստրատիվ օգնականի, մյուս երեքը տնտեսական աշխատողների պաշտոններում: Ապրիլի 6-ին դպրոցում անցկացվեց սպորտային պարերի փառատոն, որին մասնակցում էին խմբեր Երեւանից, Գյումրիից, Վանաձորից, Սիսիանից եւ Էջմիածնից:

«Հայաստան» հիմնադրամի հաջորդ ծրագրով դպրոցի բակում կկատարվեն մասնակի բարեկարգումներ. աստիճանների երկայնքով կկառուցվի բազրիք, իսկ շենքի շուրջ՝ ցանկապատ: Այսպիսով, երեխաներն ավելի ապահով կլինեն, եւ հնարավոր կլինի պահպանել բակի կանաչ տարածքը:

Նմանատիպ 8 դասասենյակ էլ կահավորվել է Աբովյանի թիվ 10 դպրոցում: Ծրագրի արժեքն է 3,688,300 ՀՀ դրամ: Դպրոցին տրամադրվել են սեղաններ, աթոռներ, գրատախտակներ եւ կախիչներ: Ծրագիրը հովանավորվել է Հայ-Ֆրանսիական բարեկամության կազմակերպության, Հայկական համերաշխության նորմանդական կազմակերպության կողմից եւ ի հիշատակ Միիրան ու Նվարթ Հացագործեանների եւ նրանց որդի Ժիրայրի:

Ֆրանսիայի Վո ան Վելենի քաղաքապետարանը ֆինանսավորել է Շիրակի մարզի Արթիկ քաղաքի թիվ 3, 4, 5, 6 եւ 7 դպրոցների կահավորումը՝ 5,510,000 ՀՀ դրամ

«Հայաստան» համահայկական հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1992թ-ին և կոչված է խթանելու մարդասիրական օգնությունը և ենթակառուցվածքների զարգացումը ՀՀ-ում և ԼՂՀ-ում: Հիմնադրամն ունի տեղական մարմիններ աշխարհի 19 երկրներում:

ընդհանուր արժողությամբ: Նախատեսվում է, որ քաղաքապետարանը կստանձնի նաեւ այս դպրոցների հետագա կահավորումը:

Երեւանի կենտրոնում գտնվող թիվ 78 դպրոցը նույնպես կահավորվել է: Ծրագրի արժեքը 4,283,200 ՀՀ դրամ է: Դպրոցին տրամադրվել են սեղաններ, աթոռներ, գրասեղաններ, գրադարակներ, գրատախտակներ ու կախիչներ:

«Հայաստան» հիմնադրամի կահավորման ծրագրերում ընդգրկված դպրոցների շարքում է նաեւ Խնձորեսկի դպրոցը, որը բարերար Միշել Չալոյանի ֆինանսավորմամբ ապահովվել է սպորտային պարագաներով: Ծրագիրը հովանավորվել է ի հիշատակ Մելիք եւ Գրայր Մարտիրոսյանների:

«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Վահե Աղաբեկյանցը, ողջունելով այս ձեռնարկների ավարտը, նշեց. «Նոր սերնդի համար ժամանակակից ու գեղեցիկ կահավորված դպրոցներ ապահովելը եւս մեկ քայլ է նրանց կյանքի պայմանները բարելավելու ուղղությամբ: Մենք ցանկանում ենք, որ մեր երեխաները մնան ու սովորեն հայրենի հողում՝ բավարարված իրենց ուսման համար ստեղծված պայմաններով: «Հայաստան» հիմնադրամն ամեն կերպ աջակցում է կառավարությանը՝ ժամանակակից դպրոցներ ստեղծելու գործում, ինչը կլուծի այսօր երկրի կրթական համակարգում առկա հիմնախնդիրը»:

###

«Հայաստան» համահայկական հիմնադրամ

* նշել աղբյուրը